Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաշվապահական հաշվառման ծառայության ձեռքբերման նպատակով սահմանել՝

1) պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

ա. պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Մենուա Մկրտչյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ,

բ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Ռոբերտ Եգորյան – համայնքի ղեկավարի խորհրդական

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Սարգսյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

08.05.2023

X

2023թ. ք. Գյումրի

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«08» մայիսի 2023 թվականի №1148-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԽԱՉԱՏՈՒՐ ՊԱՊՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 180.48 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001- 0301-0001) ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Խաչատուր Պապոյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №7890 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան 2-րդ թաղամասում գտնվող սեփականության իրավունքով քաղաքացի Խաչատուր Պապոյանին պատկանող 180.48 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001- 0301-0001) և դրա վրա առկա շինությանը տրամադրել հասցե՝

**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Վ. ՍԱՐԳՍՅԱՆ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ, 24:**

08.05.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«08» հունիսի 2023 **թվական** N 1147-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԼՈՒՍՅԱ ԹՈՐԳՈՄԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ, ԱՐՄԵՆՈՒՀԻ ԹՈՐԳՈՄԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### I ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Լուսյա Թորգոմի Մարտիրոսյանը (անձնագիր՝ AN 0772828, տրված՝ 21.12.2013թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի Անի թաղ.13փ.4 շենք 3 բնակարան հասցեում), որը լիազորագրով հանդես է գալիս քաղաքացի Արմենուհի Թորգոմի Մարտիրոսյանի անունից (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2023 թվականի մարտի 31-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով ք. Գյումրի Անի թաղամաս 13 փողոց 4 շենք թիվ 3 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Մոսկովյան շրջանային սովետի գործադիր կոմիտեի 1991 թվականի հունվարի 10-ի թիվ 1 որոշմամբ «Անի թաղամասի» 13 փողոց 4 շենք թիվ 3 հասցեի բնակարանը հատկացվել է Թորգոմ Սեներքերիմի Մարտիրոսյանի երեք անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, երկու աղջկան և տրվել թիվ 3 միասնական օրդերը:

Քաղաքացի՝ Թորգոմ Սեներքերիմի Մարտիրոսյանը մահացել է 2017 թվականի նոյեմբերի 28-ին, (հիմք՝ Ш-ЖТ N 556657 մահվան վկայական):

Դիմումին կից ներկայացվել է Մոսկովյան շրջանային սովետի գործադիր կոմիտեի 1991 թվականի հունվարի 10-ի թիվ 1 որոշմամբ տրված թիվ 3 միասնական օրդերի պատճենը, բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց 2023 թվականի մարտի 14-ի թիվ 230651065193 տեղեկանք, «Գարուն» համատիրության 2023թվականի մարտի 30-ի N 188 տեղեկանքը, Լուսյա Թորգոմի Մարտիրոսյանի անձնագրի պատճենը, Արմենուհի Թորգոմի Մարտիրոսյանի լիազորագիրը Գյումրի համայնքից Անի թաղամաս 13 փողոց 4 շենք թիվ 3 հասցեի բնակարանի համապատասխան բաժնեմասի սեփականության իրավունքի ընդունման պատրաստակամության մասին :

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ

հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023 թվականի մարտի 31-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2023 թվականի ապրիլի 20-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Արմենուհի Թորգոմի Մարտիրոսյանի լիազորված անձ՝ Լուսյա Թորգոմի Մարտիրոսյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

## II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

### 1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Ք. Գյումրի «Անի թաղ. 13 փողոց 4 շենք թիվ 3 հասցեի 63.85 (վաթսուներեք ամբողջ ութսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ 1087031 վկայական):

բ) «Անի թաղամասի» 13 փողոց 4 շենք թիվ 3 հասցեի բնակարանը 1991 թվականից հանձնված է բնակության (հիմք՝ Մոսկովյան շրջանային սովետի գործադիր կոմիտեի 1991 թվականի հունվարի 10-ի թիվ 1 որոշում):

գ) Շիրակ Գյումրի Անի թաղ. 13 փողոց 4 շենք թիվ 3 հասցեում հաշվառված բնակվում են՝ Լուսյա Թորգոմի Մարտիրոսյանը 1991 թվականից, Լևոն Սեյրանի Ղալամյանը 2013 թվականից, Ամալյա Գևորգի Ահարոնյանը 2020 թվականից, Անահիտ Երվանդի Մարտիրոսյանը 2011 թվականից, Լյուսի Լևոն Ղալամյանը 2021 թվականից (հիմք՝ բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց 2023 թվականի մարտի 14-ի թիվ 230651065193 տեղեկանք, «Գարուն» համատիրության 2023թվականի մարտի 30-ի N 188 տեղեկանք):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ Լուսյա Թորգոմի Մարտիրոսյանի, Արմենուհի Թորգոմի Մարտիրոսյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ և նրանց կողմից 1998թ.-ի մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի նկատմամբ օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարված չէ (հիմք՝ (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2023 թվականի մարտի 15-ի N ԱՏ-15032023-99-0300, 2023 թվականի ապրիլի 7-ի ԱՏ-07042023-99-0159 տեղեկանքներ):

ե) Քաղաքացի Լուսյա Թորգոմի Մարտիրոսյանի ընտանիքը Գյումրի քաղաքի «Անի» թաղ. 13 փողոց 4 շենք թիվ 3 հասցեի բնակարանը վարձակալել է 1991 թվականի հունվարի 10-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

### 2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, անհրաժեշտ է քաղաքացի Արմենուհի Թորգոմի Մարտիրոսյանի լիազորված անձ՝ Լուսյա Թորգոմի Մարտիրոսյանի դիմումը բավարարել:

## III ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ

1. Ք. Գյումրի «Անի» թաղ. 13 փողոց 4 շենք թիվ 3 hասցեի 63.85 (վաթսուներեք ամբողջ ութսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝
   1) Լուսյա Թորգոմի Մարտիրոսյանին ծնված՝ 1974 թվականին,
   2) Արմենուհի Թորգոմի Մարտիրոսյանին ծնված՝ 1973 թվականին
   որպես ընդհանուր բաժնային սեփականություն:
2. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել քաղաքացիներ Լուսյա Թորգոմի Մարտիրոսյանի, Արմենուհի Թորգոմի Մարտիրոսյանի հետ նվիրատվության պայմանագրի կնքման համար ներկայացուցիչ:
3. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ Լուսյա Թորգոմի Մարտիրոսյանին, Արմենուհի Թորգոմի Մարտիրոսյանին:
4. Քաղաքացիներ ԼուսյաԹորգոմի Մարտիրոսյանին, Արմենուհի Թորգոմի Մարտիրոսյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Լուսյա Թորգոմի Մարտիրոսյանին, Արմենուհի Թորգոմի Մարտիրոսյանին պատշաճ կարգով իրազեկման հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

**2023թիվ Գյումրի համայնք** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**ՈՐՈՇՈՒՄ**

«08» սեպտեմբերի 2023 թվականի N1146-Ա

**ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱՅԱՆԵ ՀԵՆՐԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԻՐ ԵՂԲՈՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ՝ ՀՌԻՓՍԻՄԵ ԲՈՐԻՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ, ՀԵՂԻՆԵ ԲՈՐԻՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԵՎ ՀԵՆՐԻԿ ԲՈՐԻՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ԵՎ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

2023 թվականի փետրվարի 17-ին Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել Գյումրի քաղաքի 231/450 ժամանակավոր կացարանի բնակիչ՝ Գայանե Հենրիկի Խաչատրյանը (նույնականացման քարտ՝ 001252659)՝ խնդրելով իրեն նշանակել հոգաբարձու իր եղբոր անչափահաս երեխաների՝ 16.08.2006 թվականին ծնված Հռիփսիմե Բորիսի Խաչատրյանի (ծննդյան վկայական ԱԱ №129038), 21.08.2008 թվականին ծնված Հեղինե Բորիսի Խաչատրյանի (ծննդյան վկայական ԱԱ №260727) և խնամակալ իր եղբոր անչափահաս երեխայի՝ 16.01.2012 թվականին ծնված Հենրիկ Բորիսի Խաչատրյանի (ծննդյան վկայական ԱԲ №170915) նկատմամբ:

Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 27.02.2014 թվականի թիվ ՇԴ/1262/02/13 վճռով երեխաների մոր՝ Հայաստան Զավենի Խաչատրյանի և հոր՝ Բորիս Հենրիկի Խաչատրյանի ամուսնությունը լուծվել է:

Երեխաների մոր՝ Հայաստան Զավենի Խաչատրյանի գտնվելու վայրի մասին տեղեկություն չկա (Բորիս Հենրիկի Խաչատրյանի և Գայանե Հենրիկի Խաչատրյանի հայտարարությամբ):

Երեխաների հայրը՝ Բորիս Հենրիկի Խաչատրյանը երկրորդ խմբի հաշմանդամ է (հիմք՝ տեղեկանք №00089131, տրված՝ ԲՍՓՀ-ի կողմից) և չի կարող զբաղվել իր երեխաների խնամքով և դաստիարակությամբ, նա գրավոր համաձայնություն է տվել որպեսզի իր քույրը՝ Գայանե Հենրիկի Խաչատրյանը նշանակվի հոգաբարձու և խնամակալ իր անչափահաս երեխաների նկատմամբ:

«Գյումրու Հոգեկան Առողջության Կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 05.05.2023 թվականին տրված տեղեկությունների համաձայն՝ Գայանե Հենրիկի Խաչատրյանը Գյումրու նյարդահոգեբուժական և նարկոլոգիական դիսպանսերներում հաշվառման մեջ չի գտնվում (տեղեկանքները կցվում են):

Նիստին ներկա գտնվող անչափահասներ՝ Հռիփսիմե Բորիսի Խաչատրյանը, Հեղինե Բորիսի Խաչատրյանը և Հենրիկ Բորիսի Խաչատրյանը տվել են համաձայնություն, որ իրենց նկատմամբ հոգաբարձու և խնամակալ նշանակվի իրենց հորաքույրը՝ Գայանե Հենրիկի Խաչատրյանը:

Միասնական սոցիալական ծառայության Գյումրու տարածքային կենտրոնը տվել է դրական եզրակացություն անչափահասներ՝ Հռիփսիմե Բորիսի Խաչատրյանի, Հեղինե Բորիսի Խաչատրյանի և Հենրիկ Բորիսի Խաչատրյանի նկատմամբ հորաքրոջը՝ Գայանե Հենրիկի Խաչատրյանին խնամակալ նշանակելու վերաբերյալ (հիմք՝ Միասնական սոցիալական ծառայության Գյումրու տարածքային կենտրոնի եզրակացություն, N 653 տրված՝ 20.04.2023 թվականին):

Ելնելով անչափահասներ՝ Հռիփսիմե Բորիսի Խաչատրյանի, Հեղինե Բորիսի Խաչատրյանի և Հենրիկ Բորիսի Խաչատրյանի շահից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 34-րդ, 35-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Գայանե Հենրիկի Խաչատրյանի՝ 2023 թվականի փետրվարի 17-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 2418 թվագրությամբ) և Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2023 թվականի մայիսի 4-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Սահմանել հոգաբարձություն, Գայանե Հենրիկի Խաչատրյանին (նույնականացման քարտ՝ 001252659) նշանակել հոգաբարձու իր եղբոր անչափահաս երեխաների՝ 16.08.2006 թվականին ծնված Հռիփսիմե Բորիսի Խաչատրյանի (ծննդյան վկայական ԱԱ №129038) և 21.08.2008 թվականին ծնված Հեղինե Բորիսի Խաչատրյանի (ծննդյան վկայական ԱԱ №260727) նկատմամբ:
2. Սահմանել խնամակալություն, Գայանե Հենրիկի Խաչատրյանին (նույնականացման քարտ՝ 001252659) նշանակել խնամակալ իր եղբոր անչափահաս երեխայի՝ 16.01.2012 թվականին ծնված Հենրիկ Բորիսի Խաչատրյանի (ծննդյան վկայական ԱԲ №170915) նկատմամբ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գայանե Հենրիկի Խաչատրյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

08.05.2023

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» Մայիսի 2023 թվականի N 1145 Ա

### ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆԱՀԻՏ ԱՍԼԻԲԵԳԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԹՈՌԱՆ՝ ՍՈՒՐԵՆ ՎԱՀԱՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2023 թվականի ապրիլի 17-ին Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել Գյումրի քաղաքի Պ.Սևակի 3 շենք 33 բնակարանի բնակիչ՝ Անահիտ Ասլիբեգի Սարգսյանը (անձնագիր՝ AS0531003, տրված՝ 25.03.2019 թվականին 016-ի կողմից)՝ խնդրելով իրեն նշանակել խնամակալ իր անչափահաս թոռան՝ 11.08.2009 թվականին ծնված Սուրեն Վահանի Սարգսյանի (ծննդյան վկայական ԱԲ №165721) նկատմամբ:

Երեխայի հայրը՝ Վահան Սուրենի Սարգսյանը մահացել է 2010 թվականի հուլիսի 4-ին (հիմք՝ մահվան վկայական ԱԲ №034643):

Երեխայի մայրը՝ Անժելա Ավետիսի Հովհաննիսյանը կազմել է նոր ընտանիք և տվել է համաձայնություն, որ իր անչափահաս որդու՝ Սուրեն Վահանի Սարգսյանի խնամակալ համարվի նրա տատը՝ Անահիտ Ասլիբեգի Սարգսյանը (հիմք՝ համաձայնություն, տրված՝ ՀՀ «Շիրակի մարզ» նոտարական տարածքի նոտար՝ Ռ.Մուկուչյանի կողմից, գրանցված է գրանցամատյան թիվ 2442-ով):

«Գյումրու Հոգեկան Առողջության Կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկությունների համաձայն՝ Անահիտ Ասլիբեգի Սարգսյանը Գյումրու նյարդահոգեբուժական և նարկոլոգիական դիսպանսերներում հաշվառման մեջ չի գտնվում (տեղեկանքները կցվում են):

Համաձայն «ՆՈՐ ԱՆԻ» համատիրության կողմից տրված տեղեկանքի Անահիտ Ասլիբեգի Սարգսյանը իր անչափահաս թոռան՝ Սուրեն Վահանի Սարգսյանի հետ հաշվառված և բնակվում են Գյումրի քաղաքի Պ.Սևակի 3 շենք 33 բնակարանում (հիմք՝ տեղեկանք, տրված՝ 14.04.2023 թվականին «03» 001):

Համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Գյումրու «Ֆոտոն» վարժարան» ՊՈԱԿ-ի կողմից տրված տեղեկանքի Սուրեն Վահանի Սարգսյանը սովորում է ութերորդ դասարանում (հիմք՝ տեղեկանք, տրված՝ 18.04.2023 թվականին №1853):

Նիստին ներկա գտնվող անչափահաս՝ Սուրեն Վահանի Սարգսյանը տվել է համաձայնություն, որ իր նկատմամբ խնամակալ նշանակվի իր տատը՝ Անահիտ Ասլիբեգի Սարգսյանը:

Միասնական սոցիալական ծառայության Գյումրու տարածքային կենտրոնը տվել է դրական եզրակացություն, որ անչափահաս՝ Սուրեն Վահանի Սարգսյանի նկատմամբ խնամակալ նշանակվի նրա տատը՝ Անահիտ Ասլիբեգի Սարգսյանը (հիմք՝ Միասնական սոցիալական ծառայության Գյումրու տարածքային կենտրոնի եզրակացություն, N 686 տրված՝ 27.04.2023 թվականին):

Ելնելով անչափահաս՝ Սուրեն Վահանի Սարգսյանի շահից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Անահիտ Ասլիբեգի Սարգսյանի՝ 2023 թվականի ապրիլի 17-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 6779 թվագրությամբ) և Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2023 թվականի մայիսի 4-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Սահմանել խնամակալություն, Անահիտ Ասլիբեգի Սարգսյանին (անձնագիր՝ AS0531003) նշանակել խնամակալ իր անչափահաս թոռան՝ 11.08.2009 թվականին ծնված Սուրեն Վահանի Սարգսյանի (ծննդյան վկայական ԱԲ №165721) նկատմամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անահիտ Ասլիբեգի Սարգսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

08.05.2023

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** X **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ
«05» Մայիսի 2023 թվականի N 1164-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31 -Ի N 830-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 31-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Խ.Կոչտոյան փողոց N 3/8 հասցեում գտնվող 72,15 քառակուսի մետր (արտաքին), 59,37 քառակուսի մետր (ներքին) մակերեսով բնակելին, 105,96 քառ.մ մակերեսով հողամասը քաղաքացի Թամարա Մովսիսյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին>> N 830-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած սխալի պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 31-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Խ.Կոչտոյան փողոց N 3/8 հասցեում գտնվող 72,15 քառակուսի մետր (արտաքին), 59,37 քառակուսի մետր (ներքին) մակերեսով բնակելին, 105,96 քառ.մ մակերեսով հողամասը քաղաքացի Թամարա Մովսիսյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին>> N 830-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) վերնագրում <<Թամարա Մովսիսյանին>> բառերը փոխարինել <<Ռոզա Գաբրիելյանին>> բառերով :

05.05.2023

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**2023 թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«05» մայիսի 2023 **թվականի** N 1143-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՉԱԳԱՆ ԹԱԴԵՎՈՍԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂՈՐՂԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ N 3Ա ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 14.69 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ՓԱԿՎԱԾ 1(ՄԵԿ) ԴՈՒՌԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Վաչագան Թադևոսի Պետրոսյանին պատկանող (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր №665 տրված 29.07.2022թ.) Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոց 3-րդ նրբացք N 3ա հասցեի տան հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված են 14.69 (տասնչորս ամբողջ վաթսունինը հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, ինքնակամ փակվել է 1(մեկ) դուռ:

Քաղաքացի Վաչագան Թադևոսի Պետրոսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված շինությունները օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22, 22.1 կետերի և 18-րդ կետի դ) ենթակետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով, որ կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառույցը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով քաղաքացի Վաչագան Թադևոսի Պետրոսյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականի հոկտեմբերի 31-ին N 20019 թվագրմամբ ) հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023JQZENP ծածկագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Վաչագան Թադևոսի Պետրոսյանին պատկանող Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոց 3-րդ նրբացք N 3ա հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 0.47 (զրո ամբողջ քառասունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունը ճանաչել օրինական:
2. Ինքնակամ կառուցված 18.68(տասնութ ամբողջ վաթսունութ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով կիսակառույց բնակելի շինությունը, ինքնակամ փակված 1(մեկ) դուռ ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 63094 /վաթսուներեք հազար իննսունչորս/ Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սահմանված կարգով քաղաքացի Վաչագան Թադևոսի Պետրոսյանին տրամադրել անավարտ շինությունը ավարտին հասցնելու համար ճարտարապետահատակագծային առաջադրանք անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման համար, ինչպես նաև շինարարությունն ավարտելու ժամկետների վերաբերյալ տվյալներ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Վաչագան Թադևոսի Պետրոսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
5. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

05.05.2023

X

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«05» մայիսի 2023 **թվականի** N 1142-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 20-Ի N 668-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 20-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Սարուխանյան փողոցի հարևանությամբ գտնվող 73.37 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինության և դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա 335.06 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ քաղաքացի Անդրանիկ Ոսկանյանի սեփականության իրավունքի ճանաչման մասին>> N 668-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած վրիպակի պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 20-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Սարուխանյան փողոցի հարևանությամբ գտնվող 73.37 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինության և դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա 335.06 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ քաղաքացի Անդրանիկ Ոսկանյանի սեփականության իրավունքի ճանաչման մասին>> N 668-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

1) նախաբանում <<թվագրմամբ>> բառից հետո լրացնել <<հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023BU3LKH ծածկագիրը>> բառերը և թիվը:

05.05.2023

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«05» Հուլիսի 2023 **թվականի** N 1141-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՆԱՀԻՏ ԳԱՐԵԳԻՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԵՎ ՍԱՄՎԵԼ ԳԱՐԵԳԻՆԻ ԹՈՒՄԱՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ ՓՈՂՈՑԻ N 87 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 27.92 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 40.94 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Անահիտ Պետրոսյանին և Սամվել Թումասյանին պատկանող (հիմք՝ տեխնիկական անձնագիր N 4217 տրված 1987 թվականի սեպտեմբերի 21-ին) Գյումրի քաղաքի Ռուսթավելի փողոցի N 87 հասցեի բնակելի տան օրինական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված է 27.92 (քսանյոթ ամբողջ իննսուներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 40.94 (քառասուն ամբողջ իննսունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս:

Քաղաքացիներ Անահիտ Պետրոսյանը և Սամվել Թումասյանը դիմել են Գյումրի համայնքի ղեկավարին նշված հողամասի և շինությունների նկատմամբ իրենց սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով, 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1-րդ կետի և հիմք ընդունելով քաղաքացիներ Անահիտ Պետրոսյանի և Սամվել Թումասյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականի սեպտեմբերի 30-ին N 17607 թվագրմամբ)՝ հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 20232KNPNR ծածկագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացիներ Անահիտ Պետրոսյանի (ծնված 1951 թվականի մարտի 17-ին) և Սամվել Թումասյանի (ծնված 1953 թվականի ապրիլի 22-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Ռուսթավելի փողոցի N 87 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից ավել օգտագործվող 40.94 (քառասուն ամբողջ իննսունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամասի նկատմամբ:
2. Ճանաչել քաղաքացիներ Անահիտ Պետրոսյանի, Սամվել Թումասյանի և ընդհանուր բակի մյուս համասեփականատերերի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Ռուսթավելի փողոցի N 87 հասցեի տան կառուցապատման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 40.94 (քառասուն ամբողջ իննսունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով ընդհանուր բակի նկատմամբ:
3. Քաղաքացիներ Անահիտ Պետրոսյանին և Սամվել Թումասյանին պատկանող Գյումրի քաղաքի Ռուսթավելի փողոցի N 87 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 27.92 (քսանյոթ ամբողջ իննսուներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ ճանաչել օրինական:
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Անահիտ Պետրոսյանին և Սամվել Թումասյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

05.05.2023

X

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«05» սեպտեմբերի 2023 թվականի N 1142-Ա

### ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴ-ԲԱՂ 2 ԹԱՂԱՄԱՍ 1 ՄԻԿՐՈՇՐՋԱՆ 5 ՇԵՆՔ 27 ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ՝ ՄԱՐԻԱՄ ՌՈՒԲԵՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ՝ ԱՐՏԱԿ, ԻՆԵՍԱ, ԱՆԻ, ԻՆՆԱ, ՄՈՆԻԿԱ ԵՎ ՄԵՐԻ ՍԱՐԳՍԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆՆԵՐԻՆ «ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԵՐԵԽԱՅԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-ԻՑ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2023 թվականի մայիսի 3-ին Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել (համայնքապետարանում մուտքագրված թիվ 8190 թվագրությամբ) Գյումրի համայնքի Վարդ-Բաղ 2 թաղամաս 1 միկրոշրջան 5 շենք 27 բնակարանի բնակիչ՝ Մարիամ Ռուբենի Գևորգյանը (նույնականացման քարտ՝ 011052263) խնդրելով իր անչափահաս երեխաներին՝ 29.08.2010 թվականին ծնված Արտակ Սարգսի Մարտիրոսյանին (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ673384), 08.03.2012 թվականին ծնված Ինեսա Սարգսի Մարտիրոսյանին (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ673379), 09.03.2015 թվականին ծնված Անի Սարգսի Մարտիրոսյանին (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ673395), 02.09.2016 թվականին ծնված Իննա Սարգսի Մարտիրոսյանին (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ673389), 09.11.2017 թվականին ծնված Մոնիկա Սարգսի Մարտիրոսյանին (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ673390) և 28.08.2021 թվականին ծնված Մերի Սարգսի Մարտիրոսյանին (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ673393) վերադարձնել ընտանիք:

2022 թվականի հունիսի 7-ից անչափահաս երեխաները խնամվում են «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ում:

Հիմք ընդունելով Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նիստին ներկա գտնվող Միասնական սոցիալական ծառայության Գյումրու տարածքային կենտրոնի մասնագետների բանավոր դրական կարծիքը, «Շիրակի մարզի

երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Գ.Յայլոյանի եզրակացությունը և Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2023 թվականի մայիսի 4-ի նիստի արձանագրությամբ տրված դրական եզրակացությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Անչափահասներ՝ 29.08.2010 թվականին ծնված Արտակ Սարգսի Մարտիրոսյանին (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ673384), 08.03.2012 թվականին ծնված Ինեսա Սարգսի Մարտիրոսյանին (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ673379), 09.03.2015 թվականին ծնված Անի Սարգսի Մարտիրոսյանին (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ673395), 02.09.2016 թվականին ծնված Իննա Սարգսի Մարտիրոսյանին (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ673389), 09.11.2017 թվականին ծնված Մոնիկա Սարգսի Մարտիրոսյանին (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ673390) և 28.08.2021 թվականին ծնված Մերի Սարգսի Մարտիրոսյանին (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ673393) վերադարձնել կենսաբանական ընտանիք:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մարիամ Ռուբենի Գևորգյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

05.05.2023

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

ՈՐՈՇՈՒՄ

«05» Հուլիսի 2023 թվականի N 1139-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՆԱԻՐՈՒՀԻ ՀՄԱՅԱԿԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Գ.ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ 14 ՇԵՆՔ 43-44 ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՅԻ՝ ՎԱՀԱՆ ՄԻՍԱԿԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

2023 թվականի ապրիլի 19-ին Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել քաղաքացի Նաիրուհի Հմայակի Սուքիասյանը (անձնագիր՝ AV0661264, տրված՝ 03.03.2023 թվականին 016-ի կողմից) խնդրելով տալ համաձայնություն վարձակալության տալու իր անչափահաս երեխայի՝ 13.07.2006 թվականին ծնված Վահան Միսակի Սուքիասյանի (ծննդյան վկայական՝ ԱԱ №128727)՝ Գյումրի քաղաքի Գ.Նժդեհի փողոց 14 շենք 43-44 առևտրի և սպասարկման օբյեկտի մասնաբաժինը:

Երեխայի հայրը՝ Միսակ Պողոսի Սուքիասյանը մահացել է 2018 թվականի հուլիսի 20-ին (հիմք՝ պետական վկայական մահվան մասին ԲԱ005982)

Վերոնշյալ հասցեի առևտրի և սպասարկման օբյեկտի համասեփականատեր է հանդիսանում նաև անչափահաս՝ Վահան Միսակի Սուքիասյանը (հիմք՝ 09.11.2022 թվականին գրանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 09112022-08-0021):

Նիստին ներկա գտնվող երեխայի մայրը՝ Նաիրուհի Հմայակի Սուքիասյանը հայտնեց, որ իր անչափահաս երեխան՝ Վահան Միսակի Սուքիասյանը մասնաբաժին ունի նաև Գյումրի քաղաքի Վ.Սարգսյան փողոց 1 շենք 49 բնակարան հասցեում (հիմք՝ 01.04.2019 թվականին գրանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 01042019-08-0001):

Նիստին ներկա գտնվող անչափահաս՝ Վահան Միսակի Սուքիասյանը տվել է համաձայնություն իր մասնաբաժինը վարձակալության տալու վերաբերյալ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Նաիրուհի Հմայակի Սուքիասյանի 2023 թվականի ապրիլի 19-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 7052 թվագրությամբ) և Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2023 թվականի մայիսի 4-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Համաձայնություն տալ վարձակալության տալու Նաիրուհի Հմայակի Սուքիասյանին (անձնագիր՝ AV0661264) իր անչափահաս երեխայի՝ 13.07.2006 թվականին ծնված Վահան Միսակի Սուքիասյանի (ծննդյան վկայական՝ ԱԱ №128727)՝ Գյումրի քաղաքի Գ.Նժդեհի փողոց 14 շենք 43-44 առևտրի և սպասարկման օբյեկտի մասնաբաժինը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նաիրուհի Հմայակի Սուքիասյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

05.05.2023

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«05» հունիսի 2023 թվականի N 1138-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ԱԼԻՍԱ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԲԱԳՐԱՏՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏՐԴԱՏ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻ ՓՈՂՈՑ 13 ՇԵՆՔ 58 ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՅԻ՝ ԱՎԵՏԻՔ ԱՐՄԱՆԻ ԲԱԳՐԱՏՅԱՆԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ ԳՐԱՎԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2023 թվականի մայիսի 3-ին Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել քաղաքացի Ալիսա Սերյոժայի Բագրատյանը (նույնականացման քարտ՝ 010024644) խնդրելով տալ համաձայնություն գրավադրելու իր անչափահաս երեխայի՝ 27.10.2009 թվականին ծնված Ավետիք Արմանի Բագրատյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №036445)՝ Գյումրի քաղաքի Տրդատ Ճարտարապետի փողոց 13 շենք 58 բնակարանի մասնաբաժինը:

Վերոնշյալ հասցեի բնակարանի համասեփականատեր է հանդիսանում նաև անչափահաս՝ Ավետիք Արմանի Բագրատյանը (հիմք՝ 16.12.2015 թվականին գրանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 16122015-08-0043):

Նիստին ներկա գտնվող երեխայի հայրը՝ Արման Ավագի Բագրատյանը հայտնեց, որ աշխատում է «Սպայկա» ՍՊԸ-ում որպես վարորդ-էքսպեդիտոր և բնակարանի գրավադրումը նպաստելու է հետագայում բիզնեսի զարգացմանը (հիմք՝ տեղեկանք №23/0233 տրված՝ 20.03.2023 թվականին «Սպայկա» ՍՊԸ-ի կողմից):

Նիստին ներկա գտնվող անչափահաս՝ Ավետիք Արմանի Բագրատյանը տվել է համաձայնություն իր մասնաբաժինը գրավադրելու վերաբերյալ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Ալիսա Սերյոժայի Բագրատյանի 2023 թվականի մայիսի 3-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 8185 թվագրությամբ) և Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2023 թվականի մայիսի 4-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Համաձայնություն տալ գրավադրելու Ալիսա Սերյոժայի Բագրատյանին (նույնականացման քարտ՝ 010024644) իր անչափահաս երեխայի՝ 27.10.2009 թվականին ծնված Ավետիք Արմանի Բագրատյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №036445)՝ Գյումրի քաղաքի Տրդատ Ճարտարապետի փողոց 13 շենք 58 բնակարանի մասնաբաժինը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ալիսա Սերյոժայի Բագրատյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

05.05.2023

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** X **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«05» հունիսի 2023 թվականի N 1137-Ա

### ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՅԿ ԽԱՉԻԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՅԳԱԲԱՑԻ 3-ՐԴ ՇԱՐՔ 5 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՅԻ՝ ՄԵԼԻՍԻԴԱ ՀԱՅԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ ԳՐԱՎԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2023 թվականի մայիսի 3-ին Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել քաղաքացի Հայկ Խաչիկի Ավետիսյանը (անձնագիր՝ AN0602284, տրված՝ 06.08.2013 թվականին 030-ի կողմից) խնդրելով տալ համաձայնություն գրավադրելու իր անչափահաս երեխայի՝ 17.02.2008 թվականին ծնված Մելսիդա Հայկի Ավետիսյանի (ծննդյան վկայական՝ ԱԱ №192349)՝ Գյումրի քաղաքի Այգաբացի 3-րդ շարք 5 բնակելի տան մասնաբաժինը:

Վերոնշյալ հասցեի բնակելի տան համասեփականատեր է հանդիսանում նաև անչափահաս՝ Մելսիդա Հայկի Ավետիսյանը (հիմք՝ 18.04.2023 թվականին գրանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 18042023-08-0021):

Նիստին ներկա գտնվող երեխայի հայրը՝ Հայկ Խաչիկի Ավետիսյանը հայտնեց, որ ինքը անհատ ձեռնարկատեր է և բնակելի տան գրավադրումը նպաստելու է բիզնեսի զարգացմանը (հիմք՝ պետական միասնական գրանցամատյանից քաղվածք առ 2023-01-26):

Նիստին ներկա գտնվող անչափահաս՝ Մելսիդա Հայկի Ավետիսյանը տվել է համաձայնություն իր մասնաբաժինը գրավադրելու վերաբերյալ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Հայկ Խաչիկի Ավետիսյանի 2023 թվականի մայիսի 3-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 8212 թվագրությամբ) և Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2023 թվականի մայիսի 4-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Համաձայնություն տալ գրավադրելու Հայկ Խաչիկի Ավետիսյանին (անձնագիր՝ AN0602284) իր անչափահաս երեխայի՝ 17.02.2008 թվականին ծնված Մելսիդա Հայկի Ավետիսյանի (ծննդյան վկայական՝ ԱԱ №192349)՝ Գյումրի քաղաքի Այգաբացի 3-րդ շարք 5 բնակելի տան մասնաբաժինը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայկ Խաչիկի Ավետիսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

05.05.2023

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** X **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«05» մայիսի 2023 թվականի № 1136-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՂՈՐՂԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, 79Ա ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ № 0109360) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Տիգրան Խաչատրյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված № 7955 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաք, Ղորղանյան փողոց, 79ա հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական № 0109360) վերահասցեավորել՝

**ԳՅՈՒՄՐԻ Ք., Ն. ՂՈՐՂԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, 79/2:**

05.05.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ X Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
